1. *Աշխատանք և զբաղվածություն*

Զբաղվածության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը միտված է աշխատաշուկայի առաջարկի ու պահանաջարկի խթանման, անհամապատասխանությունների վերացման, առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը որակյալ կադրերով համարելու, գործազրկության մակարդակի կրճատման խնդիրների լուծմանը: Ստեղծվել են անհրաժեշտ ենթակառույցներ և օրենսդրական դաշտ, իրականացվում են աշխատաշուկայի պետական կարգավորմանն ուղղված 11 ծրագրեր:

2013թ. վերջին նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոններում հաշվառվել են **66.3 հազար աշխատանք փնտրողներ**՝ (այդ թվում՝ կանայք 47.7 հազար, երիտասարդներ՝ 16.4 հազար): Աշխատանք փնտրողների 83.9%-ը՝ **55.6 հազարը գործազուրկներ են**, որոնցից 41.2 հազարը կանայք են (74.1%): **Երիտասարդ գործազուրկների թիվը կազմում է 13.0 հազար** (23.4%-ը): Տարվա ընթացքում ԶՊԾ է ներկայացվել ամսական միջինը 2570 թափուր աշխատատեղ: Պետական ծրագրերի արդյունքում նախորդ երեք տարիների ընթացքում **աշխատանքի են տեղավորվել** տարեկան միջինը շուրջ **11 հազար** աշխատանք փնտրողներ:

Գործազրկության մակարդակը կազմել է (ըստ ԱՎԾ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության) **2012թ.՝ 17.3%, 2013թ. երկրորդ եռամսակին 16.2%, երրորդին՝ 15.4%:**

Աշխատաշուկայում առկա **խնդիրներն են.**

- աշխատաշուկա-կրթական համակարգ թույլ կապի առկայությունը,
- թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի սակավությամբ պայմանավորված՝ դրանց քանակական անհամապատասխանությունը աշխատուժի առաջարկին,
- աշխատաշուկայի տարածքային անհամաչափ զարգացումը,
- կառուցվածքային գործազրկությունը և գործազրկության բարձր մակարդակը,
- անմրցունակ խմբերի, երիտասարդության, կանանց զբաղվածությունը,
- աշխատանքային միգրացիան,
- աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցությունը:

2012թ. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը, իսկ 2013թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է **«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը**, համաձայն որի, ակտիվ քաղաքականության նոր մոտեցումներին համապատասխան, զբաղվածության պետական **ծրագրերը** ամբողջապես **վերաիմաստավորվել են**, **գործազրկության նպաստը** փոխարինվել է **ակտիվ նոր ծրագրերով**, որոնք նպատակադրված են աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովմանը: Օրենքով կարգավորվել են նաև աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը՝ պետական-մասնավոր գործընկերային և փոխշահավետ համագործակցության խթանման նպատակով, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության խթանման նպատակով կազմակերպությունների համար սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա), սահմանված են անհրաժեշտ իրավական հիմքերը՝ զբաղվածության պետական ծառայության միջոցով աշխատաշուկայի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման ու տարածման, աշխատանք փնտրողներին և գործատուներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման համար՝ ժամանակակից ՏՏ լուծումների կիրառմամբ:

Նախարարության գործունեության կարևորագույն գերակայություններից են շարունակում մնալ միջազգային նորմերին համապատասխան՝ քաղաքակիրթ աշխատանքային հարաբերությունների, **արժանապատիվ աշխատանքի պայմանների** հաստատմանն ուղղված քայլերը:

Լուրջ քայլեր ձեռնարկվեցին պետական ծառայողների վարձատրության համակարգի բարելավման ուղղությամբ:

2013թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց **«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** ՀՀ օրենքը, որով տրվեցին պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգի ներդրման լուծումները՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, սոցիալական երաշխիքների հենասյուների վրա:

Բազային աշխատավարձը (նվազագույն պաշտոնային դրույքաչափը) կապվում է նվազագույն աշխատավարձի հետ, ինչի արդյունքում պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերը կդառնան **կանխատեսելի** և պարբերաբար **կբարձրանան** նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ:

Աշխատավարձի նոր մոդելով յուրաքանչյուր պաշտոնի համար հիմնական աշխատավարձի չափը կախված է տվյալ պաշտոնի համար նախատեսված պարտականությունների շրջանակից և պատասխանատվության աստիճանից:

2012թ. ներդրվեց նաև **սոցիալական փաթեթը,** ինչը հնարավորություն ընձեռեց շուրջ **210 հազար** աշխատողներին (քաղաքացիական և պետական ծառայողներ, պետական պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների վարչական և մասնագիտական պաշտոններ զբաղեցնողներ) և նրանց ընտանիքի անդամներին օգտվել որոշակի սոցիալական ծառայություններից՝ առողջության ապահովագրություն, հիփոթեքային վարկի մարում, ուսման վճար, հանգստի կազմակերպում:

Կարևորագույն խնդիր է **նվազագույն աշխատավարձի կարգավորումը, մասնավորապես** նվազագույն աշխատավարձի սահմանման մեթոդաբանական հիմքերի ստեղծումը՝ ՀՀ կողմից վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 131 կոնվենցիայի հիմնական մոտեցումներին համապատասխան:

ՀՀ-ում արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից **պարտադիր ապահովագրության** համակարգի ներդրման նպատակով մշակվել է **հայեցակարգ**:

2. <u>Սոցիալական աջակցություն</u>

Սոցիալական աջակցության բնագավառի խնդիրը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հայտնաբերելն է, նրանց կարիքների գնահատումը, դրա հիման վրա համարժեք աջակցության տրամադրման կազմակերպումը: Սոցիալական աջակցությունը տրամադրվում է դրամական օգնության կամ սոցիալական ծառայությունների ձևով:

Դրամական օգնության շարքում հանրապետությունում գործող ամենամեծ ծրագիրն ընտանեկան նպաստն է:

Ընտանեկան նպաստի իրավունք է ձեռք բերում աղքատ ընտանիքը, որի անապահովության մակարդակը որոշվում է տվյալ ընտանիքը բնութագրող տարբեր սոցիալական ցուցանիշների համադրմամբ ձևավորված անապահովության միավորով:

Ընտանեկան նպաստի ծրագիրը զգալի ազդեցություն ունի աղքատության, մասնավորապես ծայրահեղ աղքատության մակարդակի վրա:

Ընտանեկան նպաստի ծրագիրը չգործելու դեպքում հանրապետությունում ծայրահեղ աղքատ ընտանիքները (սպառումը պարենի զամբյուղի արժեքից ցածր) գրեթե կկրկնապատկվեր (2012թ. առկա 2.8%-ի դիմաց այն կդառնար 5.6 %):

Իրականացվել են ընտանեկան նպաստի համակարգի հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես ընտանեկան նպաստի տեղեկատվական բազայի տվյալները համադրվել են հարակից մի շարք այլ տեղեկատվական բազաներում առկա տվյալների հետ: Արդյունքում համակարգից դուրս են բերվել նպաստառության ոչ ենթակա ընտանիքներ և կրճատվել է նպաստառու ընտանիքների թիվը՝ 2011թ. հունվարի շուրջ 102 հազար ընտանիքի դիմաց՝ նույն տարվա դեկտեմբերին՝ շուրջ 84 հազար ընտանիք:

2013թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում նպաստառու ընտանիքների թիվը կազմել է շուրջ 103 հազար, նպաստի միջին չափը՝ 29350 դրամ:

2011-2013թթ. երեխայի ծննդյան միանվագ նպաստի, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը պահպանվել են նույն մակարդակով: Ընտանիքում ծնված 1-ին և 2-դ երեխայի համար նպաստի չափը 50 հազար դրամ է, իսկ 3-րդ և հաջորդող յուրաքանչյուր երեխայի համար՝ 430 հազար դրամ: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը վճարվում է աշխատող ծնողին նրա՝ երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում՝ 18 հազար դրամի չափով:

2011թ. սկսվել է **ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման գործընթացը**:

ՀՀ կառավարության 26.07.2012թ. N952-Ն որոշմամբ հաստատված ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում գործարկվել են մեկ պատուհանի սկզբունքով գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՍԾՏԿ), որոնք տեղակայվել են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով զինված շենքերում:

ՀՍԾՏԿ-ներն դիմումներն ընդունում են միասնական ընդունարանում, ունեն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային միասնական համակարգ, ՀՍԾՏԿ-ներում տեղադրվել է ՀՀ քաղաքացիների սոցիալական տվյալների տեղեկատվական միասնական բանկը: Մշակվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ մեթոդաբանությունը: Մշակված մեթոդաբանության, ինչպես նաև տեղադրված նոր տեղեկատվական համակարգերի արդյունավետ կիրառությունն ապահովելու նպատակով վերապատրաստվել են նշված 19 ՀՍԾՏԿ-ների բոլոր աշխատողները՝ 2 փուլով:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման հիմքում դիմողի (քաղաքացի կամ ընտանիք) գնահատված սոցիալական կարիքներն են, որոնց համարժեք սոցիալական ծառայությունները տրամադրելու են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի (հասարակական կազմակերպություններ) կազմակերպությունները համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Սոցիալական աջակցության ոլորտում առկա խնդիրներն են՝

- ընտանեկան նպաստի հասցեականությունը, սակայն այս առումով հիմնական խոչընդոտը՝ ընտանիքների իրական եկամուտների հայտնաբերման դժվարություններն են կամ ստվերային տնտեսությունում անձանց զբաղված լինելը,
- աղքատ ընտանիքների դիմելիության ցածր մակարդակ,
- առցանց ստացվող տվյալների ոչ բավարար մակարդակը

Փորձնական ծրագրի արդյունքների գնահատմամբ մշակվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-154-Ն, 12.12.2013թ.) և ՀՀ Ազգային ժողովում է գտնվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս իրավական ակտերում ներառվել են ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը կարգավորող դրույթներ:

3. <u>Ժողովրդագրություն</u>

Վերջին երկու տասնամյակի ընթացքում ժողովրդագրական հիմնական ցուցանիշների՝ ծնունդների, մահացության, ամուսնությունների, ամուսնալուծությունների, ինչպես նաև արտաքին միգրացիոն ցուցանիշների ուղղությամբ նկատվում է մտահոգիչ միտումներ:

Առավել նպատակային և համակարգված աշխատանքներ իրականացնելու նպատակով 2009թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է **ՀՀ ժողովրդագրական քաղաքականության** ռազմավարությունը:

Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության կողմից հաստատվում է ժողովրդագրական իրավիճակի բարելավման տարեկան ծրագիրը, որը ներառում է պետական կառավարման տարբեր մարմինների կողմից այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ժողովրդագրական խնդիրները իրենց բնույթով բավականին բարդ են և բազմաշերտ, որոնց լուծումները պահանջում են մեծ ջանքեր, նյութական ռեսուրսներ և ժամանակ:

Մշակվել և ՀՀ կառավարությանն են ներկայացվել «**Երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական աջակցության տրամադրման հայեցակարգին և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին**» և «**Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին**» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

Հանրապետությունում ծնունդների խրախուսման նոր համակարգի՝ ընտանեկան դրամագլխի ներդրման նպատակով ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ ընդունվել է «**Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման ծրագիրը**», որի համաձայն երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքը կստանա պետական աջակցության իրավունք՝ ընտանեկան դրամագլխի ձևով և որը կօգտագործվի բնակարանային պայմանների բարելավման, կրթական և առողջապահական վճարովի ծառայություններից օգտվելու համար:

Որպես ազգային անվտանգության բաղադրիչ, մշակվել և շրջանառության մեջ է դրվել ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը (2014-2017թթ.):